ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-ԻՆ, ԺԱՄԸ 16_00_ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՄՈՏ ԿԱՅԱՑԱԾ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ

Մասնակցությամբ՝

- **Վաղարշապատ համայնքի ղեկավար՝ Դիանա Գասպարյանի**
- **Արմավիր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Վարշամ Սարգսյանի**
- **Մեծամոր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Էդգար Հովհաննիսյանի**
- **Արաքս համայնքի ղեկավար՝ Ղազար Ղազարյանի**
- **Խոյ համայնքի ղեկավար՝ Արգիշտի Մեխակյանի**
- **Փարաքար համայնքի ղեկավար՝ Դավիթ Մինասյանի**
- **Բաղրամյան համայնքի ղեկավար՝ Շանթ Առաքելյանի**
- **Ֆերիկ համայնքի ղեկավար՝ Ռուստամ Հասանյանի**
- **ՀՀ Արմավիրի մարզպետարանի Գլխավոր քարտուղար՝ Արամ Հովհաննիսյանի**
- **ՀՀ Արմավիրի մարզպետի խորհրդական՝ Սաթենիկ Թովմասյանի**
- **ՀՀ Արմավիրի մարզպետի օգնական՝ Ֆելիքս Պողոսյանի**
- **ՀՀ Արմավիրի մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների**
- **Լրատվամիջոցների ներկայացուցիչների**

Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ՝

1. 2022 թվականի հունիսի 1–ի դրությամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման արդյունքների և այդ գործընթացում մարդկային ռեսուրսների մոբիլիզացման և աշխատանքների ակտիվացման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումների ու համայնքապետարանների կողմից առաջիկայում իրականացվելիք վարչարարության վերաբերյալ

/Էդվարդ Հովհաննիսյան-

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ/

2. 2021 թվականին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում ավարտված սուբվենցիոն ծրագրերի օբյեկտների, մեքենասարքավորումների, տեխնիկայի և գույքի վիճակի մշտադիտարկում իրականացնելու ընթացքի և արդյունքների վերաբերյալ

/ Աշոտ Հովհաննիսյան–ՀՀ Արմավիրի

մարզպետարանի

քաղաքաշինության վարչության պետ /

3.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում աղբահանության վճար վճարող ֆիզիկական անձանց թվի, սակագների, աղբահանության վճար վճարող իրավաբանական անձանց հետ կնքված պայմանագրերի, հավաքագրված եկամուտների և ծախսերի վերաբերյալ

/ Աշոտ Հովհաննիսյան–ՀՀ Արմավիրի

մարզպետարանի

քաղաքաշինության վարչության պետ /

4.Հողահատկացումների փաթեթները Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005 թ. N 2404–Ն որոշման 4.2 կետի և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի կողմից հաստատված ուղեցույցի պահանջներին համապատասխան ներկայացնելու պահանջի մասին

/ Աշոտ Հովհաննիսյան–ՀՀ

Արմավիրի մարզպետարանի

քաղաքաշինության վարչության պետ /

5.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում գյուղատնտեսական մթերքների մթերման ոլորտում առկա խնդիրների վերաբերյալ

/ Արթուր Այվազյան–ՀՀ Արմավիրի
մարզպետարանի գյուղատնտեսության
և բնապահպանության վարչության պետ /

6. Հայտարարություններ՝

ա/Սոցիալական ոլորտում կատարված օրենսդրական փոփոխությունների կիրարկման պրակտիկայի մասին

/ Սաթենիկ Թովմասյան –ՀՀ Արմավիրի մարզպետի
խորհրդական/

բ/Անկանխիկ գործառնությունների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության կիրարկման պրակտիկայի մասին

/ Լիաննա Հարությունյան –ՀՀ Արմավիրի մարզպետարանի
իրավաբանական բաժնի պետ–գլխավոր իրավաբան/

գ/<<Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծից բխող օրենսդրական խնդիրների կիրարկման պրակտիկայի մասին

/ Անդրանիկ Լալայան–ՀՀ Արմավիրի
մարզպետարանի զորահավաքային
նախապատրաստության բաժնի պետ /

Մինչև օրակարգային առաջին հարցին անդրադառնալը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը, ողջունելով խորհրդակցության մասնակիցներին, միաժամանակ շնորհավորեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների վարչական տարածքների ղեկավարներին պատասխանատու պաշտոններում նշանակվելու կապակցությամբ, ցանկանալով հաջողություններ իրենց առջև դրված բարդ ու դժվարին խնդիրների լուծման գործում:

<<2022 թվականի հունիսի 1–ի դրությամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման արդյունքների և այդ գործընթացում մարդկային ռեսուրսների մոբիլիզացման և աշխատանքների ակտիվացման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումների ու համայնքապետարանների կողմից առաջիկայում իրականացվելիք վարչարարության վերաբերյալ>> օրակարգային առաջին հարցի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը նշեց, որ Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման համակարգում կենտրոնական տեղ է զբաղեցնում բյուջետային համակարգը: Այն, համաձայն <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի՝ իրենից ներկայացնում է որպես տեղական ինքնակառավարման մարմիններին Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների ձևավորման և ծախսման որոշակի ժամանակահատվածի ֆինանսական ծրագրեր: Գործնականում դրանք պետք է իրականացվեն համայնքային նշանակության հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ եկամուտների ձևավորմամբ, ինչպիսիք են, որպես ֆինանսական բազա հանդիսացող բավականաչափ տարատեսակ եկամուտների ամրագրումն ու հավաքագրումը (հարկեր, տուրքեր, ոչ հարկային եկամուտներ, պաշտոնական տրանսֆերտներ), ներդրումային հնարավորությունների պարտադիր ապահովումը, ներգրավված միջոցների և սեփական ակտիվների հաշվին համայնքի բյուջեն համալրելու հնարավորությունների ընձեռումը և այլն: Համայնքներում սոցիալ- տնտեսական ոչ մի հիմնախնդիր չի կարող բարեհաջող լուծում ստանալ, եթե չի կատարվում անհրաժեշտ կարգավորում ֆինանսաբյուջետային ոլորտում:

Հայաստանի Հանրապետության պետական և համայնքային բյուջեների կարգավորումը եկամուտների ձևավորման շրջանակներում հանգեցնում է՝

1.տեղական ինքնակառավարման մարմիններին տրված պարտադիր և պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսական ապահովմանը,

2.կամավոր լիազորությունների իրականացման ուղղությամբ համայնքների ֆինանսական հնարավորությունների ապահովմանը,

3.համայնքների համաչափ զարգացման ֆինանսական հնավորությունների առկա տարբերությունների նվազեցմանը,

4.պետական բյուջեից տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական աջակցության տրամադրմանը:

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների բյուջետային հարաբերություններում առանցքային նշանակություն ունեն համայնքների պաշտոնական տրանսֆերտներ հանդիսացող սուբվենցիաներ հատկացնելու խնդիրները: Բավական է նշել, որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի սուբվենցիոն ծրագրերը 2022 թվականի հունիսի 1-ի դրությամբ կազմում են գումարով 8.715.596,446 հազար դրամ, որից՝ համայնքների համաֆինանսավորման գումարը կազմել է 3.902.950.195 դրամ, պետության կողմից համաֆինանասավորման գումարը կազմել է 4.748.929.347 դրամ, իսկ բնակչության մասնավոր հատվածի մասնակցությամբ համաֆինանսավորման գումարի չափը կազմել է 63.716.904 դրամ:

Ինչպես հայտնի է, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում սուբվենցիոն ծրագրի շրջանակներում վիթխարի աշխատանքներ են կատարվում և առաջիկայում նախանշվել են հսկայածավալ ծրագրեր: Սուբվենցիոն ծրագրերի առանձնահատկությունն այն է, որ նրանք համաֆինանսավորվում են համայնքների և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից: Ֆինանսավորման այս համակարգը կարևորվում է նրանով, որ համայնքներն իրենք ստանում են շահադրդվածություն՝ իրենց ներքին եկամուտներն ավելացնելու համար: Մյուս կողմից, այն հնարավորություն է տալիս բարձրացնելու հանրային վերահսկողության մակարդակը, քանի որ այս ծրագրերը իրականացվում են նաև համայնքային գումարներով, որոնք ձևավորվում են տեղական հարկային եկամուտներից, տուրքերից և այլ վճարներից: Մինչդեռ, ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, ընթացիկ տարվա բյուջետային եկամուտները պլանի նկատմամբ,

հունիսի 1-ի դրությամբ, կատարվել են 68,4 տոկոսով, նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցված 73,7 տոկոսի նկատմամբ: Այսինքն, 5,3 տոկոսով նվազել է եկամուտների հավաքագրումը: Իսկ սեփական եկամուտների կատարողականը կազմել է 57,1 տոկոս, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համար 68,2 տոկոսի նկատմամբ: Այսինքն, փաստորեն 11,2 տոկոսով նվազել է սեփական եկամուտների հավաքագրման մակակրդակը, ինչը հիմնականում պայմանավորված է եղել ինչպես սուբյեկտիվ, այնպես էլ օբյեկտիվ հանգամանքներով, որոնք բացասաբար են անդրադառնում համայնքների կողմից նախանշած ծրագրերի իրականացման վրա: <<Տեղական ինքնակառավարման մարմինների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ համայնքի բյուջեի եկամուտի աղբյուր հանդիսացող հարկատեսակների հավաքագրումը թե՛ իրավաբանական, թե՛ ֆիզիկական անձանց մասով, իրականացվում և վերահսկվում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից: Այդ համատեքստում համապատասխան իրավական ակտերի մակարդակով անհրաժեշտ է հստակեցնել համապատասխան ոլորտներում համայնքների ղեկավարների կողմից լիազորությունների պատվիրակումը վարչական տարածքների ղեկավարներին: Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանն ընդգծեց, որ այս գործընթացի իրական արդյունքը նկատելի կլինի, թերևս վարչական տարածքների ղեկավարների ակտիվ մասնակցությամբ քննարկվող ոլորտում գործունեության արդյունավետության բարձրացման և նրանց մշտարթուն զգոնությամբ ռեալ արդյունքների ձեռքբերման ուղղությամբ: Միանգամայն ակներև է, որ մարդիկ միշտ կհարգեն և կսատարեն տեղական իշխանությանը, եթե համոզված լինեն, որ այն միջոցները, որոնք իրենք՝ որպես օրինավոր քաղաքացիներ, հարկերի տեսքով հանձնում են նրա տրամադրությանը, ծախսվում են հոգուտ հանրային շահերի և օգտագործվում են արդյունավետորեն: Ակնհայտ է, որ վերջիններս առավել մեծ հետաքրքրություն պետք է ունենան սեփական եկամուտների հավաքագրման հարցում, քան կառավարման ցանկացած այլ մարմին: Հաշվի առնելով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված բազմաբնույթ լիազորությունների իրականացման պարկտիկայի ընթացքում

առաջացող խնդիրները, մարզպետարանը համագործակցելով տեղական ինքնակառավարման մարմինների հետ, պատրաստակամ է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման և օրինականության հետագա ամրապնդման ապահովման ուղղությամբ:

Ամփոփելով հարցի քննարկումը և անընդունելի համարելով սեփական եկամուտների հավաքագրման ցածր ցուցանիշները, **Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը համայնքների և համայնքների վարչական տարածքների ղեկավարներին առաջարկեց՝**

1.ընդունել ի գիտություն ներկայացված դիտողությունները և առաջարկությունները, սեփական պատասխանատվությամբ ամենօրյա ուշադրության կենտրոնում պահել և մշտադիտարկել 2022 թվականի բյուջեով նախատեսված ծրագրերի կատարումը՝ դրանք նախատեսված ամբողջ ծավալով իրականացնելու և թերակատարումները կանխելու համար,

2.գործնական միջոցներ ձեռնարկել սեփական եկամուտների հավաքագրման առավելագույն ցուցանիշներ ապահովելու ուղղությամբ, որը կնպաստի համայնքներում համաֆինանսավորման սուբվենցիոն ծրագրերի շրջանակում ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված պետական աջակցությամբ միջոցառումների իրականացմանը,

3.10-օրյա պարբերականությամբ ծրագրերի (միջոցառումներ) կատարողականները, դրանց չկատարման-թերակատարման մանրամասն հիմնավորումները, խնդրահարույց միջոցառումների մասով՝ հետագա ընթացքի մասին տեղեկատվությունները ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան:

4.Իսկ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Վարազդատ Մկրտչյանին և ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Գոռ Հովհաննիսյանին հանձնարարեց՝ համատեղ կարգով ակտիվացնել համագործակցությունը մարզի համայնքների ղեկավարների հետ համայնքների սեփական եկամուտների հավաքագրման առավելագույն ցուցանիշներ

ապահովելու նպատակով և համայնքներից 10-օրյա պարբերականությամբ ընթացիկ արդյունքների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան ներկայացված և ամփոփված տեղեկատվությունները ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը նշեց, որ չնայած վիճակագրության համաձայն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզը աճ է գրանցել 2022 թվականի հունվարի 1-ի դրությամբ սուբվենցիոն ծրագրերի կտրվածքով, այդուհանդերձ, հասկանալի է, որ ավելի երկարատև ժամկետում կայուն սոցիալ-տնտեսական զարգացում ապահովելը մեծապես կախված կլինի այսօրվա իրականացվող բարեփոխումների և նախագծերի ճկունությունից և արդյունավետությունից: Այդ իմաստով, տեղական ինքնակառավարման մարմինների համարկարգում վարչական ղեկավարների ինստիտուտը կօգնի, կաջակցի և կառաջնորդի համայնքների համապատասխան բնակավայրերում տեղական ինքնակառավարման մարմինների առջև ծառացած խնդիրների լուծմանը և մարտահրավերների հաղթահարմանը:

<<2021 թվականին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում ավարտված սուբվենցիոն ծրագրերի օբյեկտների, մեքենասարքավորումների, տեխնիկայի և գույքի վիճակի մշտադիտարկում իրականացնելու ընթացքի և արդյունքների վերաբերյալ>> օրակարգային երկրորդ հարցի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Աշոտ Հովհաննիսյանը նշեց, որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում ավարտված սուբվենցիոն ծրագրերի մասով մշտադիտարկում իրականացնելու նպատակով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի հանձնարարությամբ և մարզպետարանի գլխավոր քարտուղարի 26.04.2022թ. N ԳՔՀ/237-2022 հրամանով, 2022թ. ապրիլի 26-29 ընկած ժամանակահատվածում, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի

համապատասխան մասնագետների և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների ղեկավարների /ներկայացուցիչների/ մասնակցությամբ մշտադիտարկում է իրականացվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում 2020-2021 թվականներին ավարտված և շահագործման հանձնված սուբվենցիոն ծրագրերով իրականացված թվով 53 օբյեկտներում,որի արդյունքում տարբեր տիպի մասնակի թերություններ են /ոչ խնդրահարույց/ արձանագրվել թվով 25 ծրագրերում:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 27.05.2022թ. N 01/7/03241-2022 գրությամբ, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների ղեկավարներին առաջարկվել է ծրագրերն իրականացնող և շահագործման հանձնած կապալառու կազմակերպությունների ներգրավմամբ, հնարավորինս սեղմ ժամկետներում արձանագրված թերությունները վերացնել և արդյունքների մասին տեղեկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան:

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 09.06.2022թ. N ԳՍ/20.1/14714-2022թ, գրությամբ՝ թերությունների վերացման վերջնաժամկետ է սահմանվել 30 օր: Արձանագրված թերությունների վերացման աշխատանքներն ընթացքի մեջ են:

Ամփոփելով հարցի քննարկումը, **Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը համայնքների ղեկավարներին առաջարկեց՝**

1.գործնական միջոցներ ձեռնարկել մշտադիտարկման արդյունքում արձանագրված թերությունները վերացնելու ուղղությամբ և արդյունքների մասին պարբերաբար տեղեկատվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան,

2.իսկ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Աշոտ Հովհաննիսյանին հանձնարարեց՝ ընդհանուր վերահսկողությամբ ակտիվացնել համագործակցությունը համայնքների ղեկավարների հետ և ամփոփելով նրանց կողմից մշտադիտարկման արդյունքում արձանագրված թերությունները սահմանված ժամկետում վերացնելու ուղղությամբ

ձեռնարկված աշխատանքների արդյունքները, այն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին՝ վերջնական արդյունքները Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին ուղարկելու նպատակով:

<<**Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում աղբահանության վճար վճարող ֆիզիկական անձանց թվի, սակագների, աղբահանության վճար վճարող իրավաբանական անձանց հետ կնքված պայմանագրերի, հավաքագրված եկամուտների և ծախսերի վերաբերյալ**>> օրակարգային երրորդ հարցի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Աշոտ Հովհաննիսյանը նշեց, որ ՀՀ Արմավիրի մարզի համայնքներում աղբահանության վճար վճարող ֆիզիկական անձանց թիվը՝ կազմում է 230654 մարդ, աղբահանության պայմանագիր կնքած վճար վճարող իրավաբանական անձանց թիվը՝ 1889: ՀՀ Արմավիրի մարզի համայնքներում 2022թ. տարեկան աղբահանության եկամուտի մասով պլանավորվել է հավաքագրել 397091600 ՀՀ դրամ: 2022 թվականի ընթացիկ 5 ամիսների ընթացքում եկամուտի մասով աղբահանության համար պետք է հավաքագրվեր 165436290 ՀՀ /դրամ, սակայն հավաքագրվել է 96033234 ՀՀ /դրամ, որից՝ ֆիզիկական անձանցից՝ 78255434 ՀՀ/դրամ, իսկ տնտեսավարող սուբյեկտներից՝ 17777800 ՀՀ /դրամ: Ի դեպ, աղբահանության համար համայնքների կողմից ծախսվել է շուրջ 270801493 ՀՀ /դրամ:

Ամփոփելով հարցի քննարկումը և անընդունելի համարելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում աղբահանության վճար վճարող ֆիզիկական անձանցից և աղբահանության վճար վճարող իրավաբանական անձանցից աղբահանության համար վճարների հավաքագրման ցածր ցուցանիշները, **Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը համայնքներին ղեկավարներին առաջարկեց՝**

1.համայնքներում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները պատշաճ մակարդակով կազմակերպելու, սանիտարահիգիենիկ իրավիճակը

բարելավելու, աղբահանության վարձավճարների հավաքագրման կատարողական ցուցանիշները բարձրացնելու, աղբահանության ծախսերի և եկամուտների հստակ և արդյունավետ հավաքագրումն ապահովելու նպատակով՝ խստացնել հսկողությունն աղբահանության, վարձավճարների հավաքագրման, իրավաբանական անձանց հետ պայմանագրերի կնքման, աղբավայրերում հակահրդեհային միջոցառումները պատշաճ իրականացնելու գործընթացի նկատմամբ և արդյունքների վերաբերյալ 10-օրյա պարբերականությամբ տեղեկատվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան,

2.իսկ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Աշոտ Հովհաննիսյանին հանձնարարեց՝ քննարկվող ոլորտի հետ կապված, ակտիվացնել համագործակցությունը համայնքների ղեկավարների հետ և ամփոփելով նրանց կողմից կատարված աշխատանքների արդյունքները, այն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

<<**Հողահատկացումների փաթեթները Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005 թ. N 2404–Ն որոշման 4.2 կետի և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի կողմից հաստատված ուղեցույցի պահանջներին համապատասխան ներկայացնելու պահանջի մասին**>> օրակարգային չորրորդ հարցի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Աշոտ Հովհաննիսյանը նշեց, որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան ներկայացվող քաղաքաշինական փաթեթները հաճախ Հայաստանի Հանրապետության օրենսդրության, նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջները չապահովելու և համայնքների գլխավոր հատակագծերով ամրագրված դրույթներին հակասելու պատճառով վերադարձվում են լրամշակման կամ արժանանում են բացասական եզրակացության:

Ներկայացվող փաթեթներում ներառված նյութերում բացակայում են տարածքի տեղադիրքի, հարակից հողօգտագործումների նպատակային և գործառնական

նշանակության, դրանցում առկա շենքերի ու շինությունների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև առաջարկվող հողամասի կառուցապատման սխեմաները, առկա շինությունների նկատմամբ հակահրդեհային, սանիտարական նորմերի պահանջների և կառուցապատմանը ներկայացվող համապատասխան սահմանափակումների ապահովումը: Ճարտարապետահատակագծային առաջադրանքները չեն պարունակում օբյեկտի նախագծային փաստաթղթերի մշակմանը ներկայացվող պարտադիր պայմաններ:

Հաշվի առնելով հարցի կարևորությունը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների ղեկավարներին են ներկայացվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման հիման վրա Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի /այսուհետ՝ Կոմիտե/ կողմից մշակված և Կոմիտեի նախագահի 2021 թվականի հոկտեմբերի 28-ի << Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգով առանձին հողամասի նպատակային նշանակության փոփոխության մասով գլխավոր հատակագծում փոփոխություն կատարելու նպատակով լիազոր մարմին ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթի կազմման ուղեցույցը հաստատելու մասին>> N 66-Լ հրամանով հաստատված ուղեցույցը /այսուհետ՝ Ուղեցույց/: Ի դեպ, ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման իրավասու մարմինը շինարարության, քանդման (ապամոնտաժման), շահագործման թույլտվությունները ձևակերպելուց հետո եռօրյա ժամկետում դրա մասին ծանուցում է մարզպետին և քաղաքաշինական պետական տեսչությանը՝ կցելով նշված թույլտվությունների պատճենները: Սակայն նշվածը շատ հաճախ կատարվում է թերի՝ շինարարության, քանդման (ապամոնտաժման), շահագործման թույլտվությունները ներկայացվում են ուշացումներով, որն անթույլատրելի է:

Ամփոփելով հարցի քննարկումը և անընդունելի համարելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգի խախտմամբ փաստաթղթային փաթեթները Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան ուղարկելու

փաստը, **Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը համայնքներին ղեկավարներին առաջարկեց՝**

1.այսուհետև, ակտիվորեն համագործակցելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության հետ, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան ներկայացնել օրենսդրությանը չհակասող փաստաթղթային փաթեթներ, դրանց կազմման ժամանակ ղեկավարվելով վերը նշված ուղեցույցով և Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. N 2404-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 10.03.2022թ. N 282-Ն որոշմամբ:

2.իսկ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Աշոտ Հովհաննիսյանին հանձնարարեց՝ ըստ անհրաժեշտության Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների կողմից ներկայացվող փաստաթղթային փաթեթների մշակման գործընթացում ցուցաբերել որակյալ մասնագիտական խորհրդատվություն:

<< **Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում գյուղատնտեսական մթերքների մթերման ոլորտում առկա խնդիրների վերաբերյալ** >> օրակարգային հինգերորդ հարցի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Արթուր Այվազյանը նշեց, որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում գյուղատնտեսական մթերքների իրացումն իրականացվում է մարզում տեղակայված 4 մեծածախ, 3 մանրածախ շուկաներում, պտուղ, բանջարեղեն մթերող 7 և խաղող մթերող 12 կազմակերպությունների, ինչպես նաև արտահանում իրականացնող բազմաթիվ իրավաբանական և ֆիզիկական անձանց միջոցով:

Գյուղատնտեսական մթերքների արտահանման գործում մինչև օրս առկա են խնդիրներ, որոնք կապված են Լարսի անցակետում լոգիստիկ խնդիրների հետ: 2022 թվականի հունիսի 15-ից նախատեսվում է կազմակերպել և իրականացնել լաստանավային բեռնափոխադրումներ, որի հաջող իրականացումը կնպաստի արտահանման ծավալների

ավելացմանը և կթուլացնի այս բնագավառում դեռևս առկա լարվածությունը, որն իր հերթին դրականորեն կանդրադառնա գյուղատնտեսական մթերքների իրացման գնի վրա: Պտուղ, բանջարեղեն և խաղող մթերող այն կազմակերպությունները, որոնք Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից սահմանված ժամկետներում՝ պտուղ, բանջարեղենի դեպքում մինչև մայիսի 31-ը , իսկ խաղողի դեպքում մինչև հուլիսի 1-ը կկնքեն համապատասխան մթերման պայմանագրեր, կարող են օգտվել պետական աջակցության ծրագրերից: Ծրագրի շրջակակներում ընկերություններին տրամադրվում է 3-4 մլրդ դրամ վարկ, 6 ամսից մինչև 1 տարի արտոնյալ ժամկետով, որի 10 տոկոսը սուբսիդավորվում է պետության կողմից և գրավի չբավարարող մասի չափով տրվում է պետական երաշխիք:

Այնուհետև, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Արթուր Այվազյանը ներկայացրեց պտղի և բանջարեղենի մթերման պայմանագրերի կնքման իրավիճակն ըստ մթերող կազմակերպությունների՝

1. <<**ՄԱՊ**>> **ՓԲԸ** – չունի կնքված պայմանագրեր, աշխատելու է նախկին մատակարարների հետ պետական աջակցության ծրագրերից կօգտվի միայն խաղողի մթերման համար,

2. <<**Պռոշյանի կոնյակի Գործարան**>>– Ընկերությունը 2 գործարաններում կնքել է 16364 տոննա պտուղ, բանջարեղենի մթերման պայմանագիր 2,5 մլրդ դրամ արժեքով,

3. **Իջևանի գինու գործարանի Լեռնագոգի մասնաճյուղ** – Կնքել է շուրջ 1200 տոննա պտուղ – բանջարեղենի պայմանագիր,

4. <<**Երևանի մարմելադ Ինթերֆրայզ**>> **ՍՊԸ** – Քարակերտում կնքել է 8760 տոննա պտուղ բանջարեղենի պայմանագիր

5. <<**Գուրմանե ՍՊԸ**>> – Չունի կնքված պայմանագրեր, բայց մթերելու է 100 տոննա վարունգ, կարտոֆիլ, սմբուկ, նայած թե ինչ պայմանագիր կունենա Պաշտպանության նախարարության հետ,

6. <<**Արմավիր Ֆրուտ**>> – Չունի կնքված պայմանագրեր, սակայն պատրաստվում է մթերելու շուրջ 3000 տոննա սալոր:

7. <<**Նոյան**>>- Ընկերությունը գործարանում տեղի ունեցած հրդեհից հետո մարզում դեռևս գործունեություն չի ծավալում և չի աշխատում:

Եթե 2021 թվականին ընկերությունների կողմից մթերվել է 15203 տոննա պտուղ, բանջարեղեն ապա այս տարի նախնական պայմանավորվածություններով այն գերազանցելու է 20 հազար տոննան: Եթե պտուղ – բանջարեղենի մթերման գործում առկա է դրական տեղաշարժեր, ապա նույնը չի կարելի ասել խաղողի մթերման դեպքում: 2022թվականին խաղող մթերող կազմակերպությունները նախնական տվյալներով մթերելու են շուրջ 60 հազար տոննա խաղող, ինչը 26000 տոննայով պակաս է 2021 թվականին մթերված քանակից, ինչի վերաբերյալ նրանք տեղեկացրել են մարզպետի մոտ կայացած խորհրդակցության ժամանակ:

Ամփոփելով հարցի քննարկումը, **Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը համայնքներին ղեկավարներին առաջարկեց՝**

1.խաղողի մթերումը ժամանակին և արդյունավետ կազմակերպելու նպատակով անհրաժեշտ է խաղողի մթերման ժամանակահատվածում մարզպետարան – համայնք ակտիվ համագործակցությամբ ճշգրիտ տեղեկատվության ժամանակին և օպերատիվ տրամադրումը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչությանը՝ մթերումների աշխատանքները վերահսկելու, ընթացիկ խնդիրները լուծելու և մթերումների վերաբերյալ հստակ վիճակագրություն կազմելու նպատակով,

2.Իսկ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Արթուր Այվազյանին հանձնարարեց՝ ինչպես արտադրված ամբողջ խաղողի մթերման, այնպես էլ գյուղատնտեսական այլ մթերքների մթերումների ժամանակահատվածում ակտիվ աշխատանքներ տանել մթերումների ամբողջ գործընթացը վերահսկելու, համակարգված, արդյունվետ կազմակերպելու և արդյունքները պարբերաբար Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին ներկայացնելու ուղղությամբ:

Այնուհետև օրակարգային հարցերի քննարկման ավարտից հետո համապատասխան հայտարարություններով հանդես եկան՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի խորհրդական Սաթենիկ Թովմասյանը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ–գլխավոր իրավաբան Լիաննա Հարությունյանը և Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Անդրանիկ Լալայանը: Մասնավորապես՝

ա/ Սոցիալական ոլորտում կատարված օրենսդրական փոփոխությունների կիրարկման պրակտիկայի մասին հայտարարությամբ հանդես եկած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի խորհրդական Սաթենիկ Թովմասյանը նշեց, որ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունվել է <<**Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին**>> օրենքը: Համաձայն օրենքի՝ պետությունը երաշխավորություն է ստանձնում հաշմանդամություն ունեցող անձանց՝ այլ անձանց հետ համահավասար անկախ կյանքի և համայնքում ներառվելու համար անհրաժեշտ պայմաններ և հավասար հնարավորություններ ստեղծելու ուղղությամբ: Օրենքով սահմանվել են դրույթներ հաշմանդամության հիմքով խտրականությունը արգելելու, ֆիզիկական միջավայրի, տեղեկատվության և հաղորդակցման մատչելիությունն ապահովելու վերաբերյալ: Միաժամանակ, 2021 թվականի մայիսի 5-ին ընդունվել է <<**Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին**>> օրենքը, որի համաձայն վերափոխվում է հաշմանդամության գնահատման համակարգը. 2023 թվականի փետրվարի 1-ից հաշմանդամության գնահատման նպատակով բժշկասոցիալական փորձաքննություն փոխարեն կիրականացվի անձի ֆունկցիոնալության գնահատում, որի նպատակը հաշմանդամության գնահատման նոր մոդելի ներդրմամբ հաշմանդամություն ունեցող անձանց գնահատված կարիքին համարժեք ծառայություններ մատուցելու իրավական հիմքերի ստեղծումն է: Անցումը ֆունկցիոնալության գնահատման պայմանավորված է նրանով, որ փոխվել է հաշմանդամության վերաբերյալ գաղափարախոսությունը և նշանակալից տեղ են տրվում միջավայրային գործոններին, որոնք կարող են խոչընդոտել կամ օգնել անձին հաղթահարելու առողջության մակարդակում ի հայտ եկած խնդիրները: Անձի ֆունկցիոնալության գնահատումն իրականացվելու է այդ նպատակով ստեղծված էլեկտրոնային համակարգի միջոցով: Հաշմանդամության խմբերի փոխարեն այսուհետ կսահմանվեն անձի ֆունկցիոնալության սահմանափակման աստիճաններ՝ թեթև, միջին, ծանր, խորը: Ֆունկցիոնալության սահմանափակման միջին կամ ծանր կամ խորը աստիճան սահմանելու դեպքում անձը ճանաչվում է հաշմանդամություն ունեցող: Այս համատեքստում հաշմանդամությունն այլևս չի դիտարկվի որպես մշտական առողջական խնդիր. հաշմանդամության գնահատման հիմքում կդրվի ոչ միայն առողջական խնդիրների գործոնն, այլև՝ անձի հասարարական կյանքի գործունեության ու մասնակցության միջավայրային գործոնները:

Տեղեկացվեց նաև, որ իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում հանրային քննարկման է դրված << Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող

անձանց մատուցվող խնամքի կարգը, պայմանները և չափորոշիչները սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112-Ն և հոկտեմբերի 29-ի N 1292-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի N 730-Ն և 2015 թվականի դեկտեմբերի 17-ի N 1533-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որի ընդունման արդյունքում հնարավոր կլինի հստակեցնել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված տարեց և (կամ) հաշմանդամություն, այդ թվում՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց՝ խնամքի ծառայությունների տրամադրումը, ինչպես խնամքի համար նախատեսված հիմնարկներում, այնպես էլ համայնքահեն փոքր տներում, սոցիալական հոգածության ցերեկային կենտրոններում և տնային պայմաններում:

Հաշմանդամություն ունեցող անձանց հատուկ հաստատություններից դուրս անկախ կյանքի և համայնքում ներառվելու իրավունքի իրացումը ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ձեռք է բերել առանձնատներ Արմավիրի մարզի Ակնաշեն, Մրգաստան և Գեղակերտ համայնքներում, որոնցում հնարավոր կլինի խնամքի ծառայություններ տրամադրել 36 անձի: Հետագայում՝ ըստ անհրաժեշտության խնամքի տներ կբացվեն նաև մարզի այլ համայնքներում: Համայնքային փոքր տունն ունի ընտանեկանին առավելագույնս մոտ պայմաններ, և կարող է ապաստանել տվյալ համայնքում կամ հարևան համայնքներում բնակվող, ինչպես նաև տուն-ինտերնատներում խնամվող՝ տվյալ տարածաշրջանի նախկին բնակիչների: Այնտեղ կարող են մնալ կացարանի ու խնամքի կարիք ունեցող այն տարեցները, որոնք ունեն նաև ընտանեկան ջերմության, շփման, հասակակիցների հետ հաղորդակցման, զբաղմունքի նախընտրելի տեսակներով զբաղվելու, համայնքի կյանքին մասնակցելու կարիք և այլն: Մեկ համայնքային փոքր տանը կարող են բնակվել առավելագույնը 10 տարեց:

2022թ. հունվարի 18-ին ընդունվել է <<Անկանխիկ գործառնությունների մասին>> Հայաստանի Հանրապետության **օրենքը, որը ուժի մեջ է մտնելու 2022թ. հուլիսի 1-ից:** 2022 թվականի հուլիսի 1-ից անկանխիկ եղանակով գործարքներ կատարող կենսաթոշակառուներից բացի, 10%-ի չափով հետվճարի իրավունք կունենան նաև նպաստառուները: Հետվճար ստանալու իրավունքը տարածվում է նպաստների և աջակցության հետևյալ տեսակներն անկանխիկ եղանակով ստացող քաղաքացիների վրա՝ ընտանեկան նպաստ, սոցիալական նպաստ, ծերության նպաստ, հաշմանդամության նպաստ, կերակրողին կորցնելու դեպքում նպաստ, մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ, երրորդ և հաջորդ երեխայի ծննդով պայմանավորված՝ 50,000 դրամ

աջակցություն, պատվովճար, պարգևավճար: Վերոնշյալ վճարները անկանխիկ եղանակով ստանալու համար շահառուն կարող է դիմել Միասնական սոցիալական ծառայության իր բնակության վայրն սպասարկող տարածքային կենտրոն՝ ներկայացնելով գրավոր դիմում, անձը հաստատող փաստաթուղթ և ընտրելով Ծառայության հետ պայմանագիր կնքած բանկը:Սոցիալական և ընտանեկան նպաստն անկանխիկ եղանակով ստանալու նպատակով նպաստառու ընտանիքի չափահաս անդամներից մեկը կարող է դիմել Միասնական սոցիալական ծառայության իր բնակության վայրն սպասարկող տարածքային կենտրոն: Քաղաքացու կողմից ներկայացված դիմումը պետք է ստորագրված լինի ընտանիքի բոլոր չափահաս անդամների կողմից, ընդ որում՝ հաշիվը բացվելու է դիմողի անունով:

Անդրադառնալով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի խորհրդական Սաթենիկ Թովմասյանի կողմից ներկայացված հայտարարությանը, **Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը համայնքներին ղեկավարներին առաջարկեց՝**

1. **ընդունել ի գիտություն և ապահովել համայնքների ազգաբնակչությանը հայտարարությամբ նշված իրավական ակտերով սահմանված իրավակարգավորումների վերաբերյալ պատշաճ իրազեկումը:**

բ/ Անկանխիկ գործառնությունների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության կիրարկման պրակտիկայի մասին հայտարարությամբ հանդես եկած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ–գլխավոր իրավաբան Լիաննա Հարությունյանը նշեց, որ 2022 թվականի հունվարի 18-ին ընդունվել և 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ է մտնելու <<Անկանխիկ գործառնությունների մասին>> ՀՕ-12-Ն օրենքը, համաձայն որի 5-րդ հոդվածի պահանջների՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ֆիզիկական անձանց միջև 2022 թվականի հուլիսի 1-ից 500,000 ՀՀ դրամը գերազանցող վճարումը և վճարման ստացումը բոլոր այն գործարքների դիմաց, որոնց արդյունքում ծագող իրավունքները ենթակա են պարտադիր գրանցման, իրականացվում են անկանխիկ ձևով՝ անկախ վճարման կարգից, եթե այլ օրենքներով այդ գործարքների դիմաց վճարման ավելի ցածր սահմանաչափեր նախատեսված չեն, ինչպես նաև ֆիզիկական անձանց միջև 300,000 ՀՀ դրամը գերազանցող փոխառությունների տրամադրումը և ստացումն իրականացվում են անկանխիկ ձևով: Հայաստանի Հանրապետության տարածքում ֆիզիկական անձանց միջև 2023 թվականի հուլիսի 1-ից 300,000 ՀՀ դրամը գերազանցող վճարումը և վճարման ստացումը բոլոր գործարքների համար իրականացվում են անկանխիկ ձևով: Նույն օրենքի 6-րդ

հոդվածով սահմանված են աշխատավարձի, կենսաթոշակի և այլ վճարների կանխիկ ձևով սահմանափակումները, համաձայն որի պահանջների՝ օրենքով կամ աշխատանքային պայմանագրով սահմանված աշխատավարձերը վճարվում են անկանխիկ ձևով 2023 թվականի հուլիսի 1-ից՝ Հայաստանի Հանրապետության մարզերի վարչական կենտրոններում գործունեություն իրականացնող կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի, փաստաբանների և նոտարների կողմից, 2024 թվականի հուլիսի 1-ից՝ Հայաստանի Հանրապետության այլ բնակավայրերում գործունեություն իրականացնող կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի, փաստաբանների և նոտարների կողմից: Հաշմանդամության կարգ ունեցող անձի գրավոր դիմումի հիման վրա նրա աշխատավարձը կարող է վճարվել կանխիկ ձևով: Պետական կամ համայնքային բյուջեներից և այդ բյուջեներ կատարվող ցանկացած վճարում իրականացվում է անկանխիկ ձևով: Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է սահմանել սույն մասից բացառություն կազմող այն վճարների տեսակները և այդպիսի վճարներ ստացողների առանձին կատեգորիաների ցանկը, որոնք կարող են վճարել, կամ որոնց կարող է վճարվել կանխիկ ձևով:

Գործուղման նպատակով կատարվող վճարումները, պետական գնումների հետ կապված վճարումները կատարվում են անկանխիկ ձևով՝ 2023 թվականի հուլիսի 1-ից՝ Հայաստանի Հանրապետության մարզերի վարչական կենտրոններում գործունեություն իրականացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից, 2024 թվականի հուլիսի 1-ից՝ այլ բնակավայրերում գործունեություն իրականացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից:

Սկսած 2022 թվականի հուլիսի 1-ից՝ Երևան քաղաքում, 2023 թվականի հուլիսի 1-ից՝ Հայաստանի Հանրապետության մարզերի վարչական կենտրոններում, 2024 թվականի հուլիսի 1-ից՝ այլ բնակավայրերում գործունեություն իրականացնող բժշկական կազմակերպություններում (հաստատություններում) մատուցված բոլոր բժշկական ծառայությունների դիմաց կատարվող վճարներն ընդունվում են անկանխիկ ձևով:

Սկսած 2022 թվականի հուլիսի 1-ից՝ Երևան քաղաքում, 2023 թվականի հուլիսի 1-ից՝ Հայաստանի Հանրապետության մարզերի վարչական կենտրոններում, 2024 թվականի հուլիսի 1-ից՝ այլ բնակավայրերում գործունեություն իրականացնող ուսումնական (այդ թվում՝ բարձրագույն ուսումնական) հաստատություններում մատուցված բոլոր կրթական ծառայությունների դիմաց կատարվող վճարներն ընդունվում են անկանխիկ ձևով:

Ապահովագրական հատուցումները կատարվում են անկանխիկ ձևով:

Սկսած 2022 թվականի հուլիսի 1-ից՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց գործունեության հետ կապված բոլոր գործառնությունները (վճարումների կատարումը և վճարումների ստացումը) իրականացնում են անկանխիկ ձևով, բացառությամբ Կառավարության սահմանած դեպքերի:

Նույն օրենքի 2-րդ գլխով սահմանված են նաև վերահսկողությունը և պատասխանատվությունը, համաձայն որի՝ Կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի, փաստաբանների, ֆիզիկական անձանց և նոտարների կողմից նշված օրենքի կամ դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն է իրականացնում և պատասխանատվության միջոցներ է կիրառում Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն, իսկ աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն է իրականացնում և պատասխանատվության միջոցներ է կիրառում Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը:

Վերջում, որպես հավելում, նշվեց, որ <<Անկանխիկ գործառնությունների մասին>> ՀՀ օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հուլիսի 1-ից և տարածվում է այն ուժի մեջ մտնելուց հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

Անդրադառնալով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ–գլխավոր իրավաբան Լիաննա Հարությունյանի կողմից ներկայացված հայտարարությանը, **Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը համայնքներին ղեկավարներին առաջարկեց՝**

1.ընդունել ի գիտություն և ապահովել համայնքների ազգաբնակչությանը հայտարարությամբ նշված իրավական ակտերով սահմանված իրավակարգավորումների վերաբերյալ պատշաճ իրազեկումը:

գ/<<Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծից բխող օրենսդրական խնդիրների կիրարկման պրակտիկայի մասին հայտարարությամբ հանդես եկած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Անդրանիկ Լալայանը նշեց, որ վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և նախարարության գործուղմամբ օտարերկրյա պետությունների ռազմաուսումնական հաստատություններ

ընդունելության քանակական և որակակական վերլուծությունը ցույց է տալիս, որ տարեցտարի նվազում է կադրային սպայական ծառայություն անցնելու ցանկություն ունեցող քաղաքացիների քանակը, ինչը մեծապես կապված է զինվորական ծառայության առանձնահատուկ և որոշակիորեն ծանր պայմաններով բնույթի և ներկա դրությամբ դրանց արդեն իսկ ոչ համարժեք վարձատրության և սոցիալական երաշխիքների համակարգի առկայության հետ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026թթ. ծրագրով պաշտպանության ոլորտի բարեփոխումների համատեքստում կարևորվել և ամրագրվել է զինվորական ծառայության շահադրդման նյութական և բարոյահոգեբանական մեխանիզմների խթանման, արհեստավարժ զինծառայության գրավչության բարձրացման, զինծառայողների բնակարանային ապահովման ուղղությամբ ծրագրերի իրականացումը, որի շրջանակներում ռազմաուսումնական հաստատություններ ընդունելության և կադրային սպայական ծառայության գրավչության ապահովման նպատակով հրատապ է դարձել առնվազն կադրային զինվորականի ուղի ընտրող քաղաքացիների համար բնակարանային ապահովության այնպիսի մոդելի սահմանումը, որը հնարավորություն կտա 2022 թվականի հուլիսի 1-ից հետո ռազմաուսումնական հաստատություններ ընդունված, այն ավարտած և սպայական ծառայության անցած զինծառայողների համար լուծել ամբողջությամբ պետական ֆինանսավորմամբ բնակարանային ապահովությանը հարցը:

Յուրաքանչյուր տարվա համար անհրաժեշտ քանակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պատրաստի բնակարանների գնման միջոցով ձեռք են բերվելու 3 սենյականոց բնակարաններ և ռազմաուսումնական հաստատությունն ավարտելուց հետո անհատույց օգտագործման իրավունքով հատկացվելու են սպաներին:

Օրենքի նախագծի համաձայն ռազմաուսումնական հաստատություն ընդունված զինծառայողների հետ կնքվող զինվորական ծառայություն անցնելու պայմանագրի ժամկետը սահմանվում է **20 տարի:**

Սահմանվում է ռազմաուսումնական հաստատություն ավարտած և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգում սպայական պաշտոնի նշանակված սպայական կազմի զինծառայողների համար անհատույց օգտագործման և անհատույց սեփականության իրավունքով բնակարան ստանալու իրավունք:

Հաշվի առնելով նշված հանգամանքները, Հայաստանի Հանրապետության **կառավարությունը հանդես է եկել օրենսդրական նախաձեռնությամբ՝ <<Զինվորական**

ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին օրենք>>-ում փոփոխությունների և լրացումներ կատարելու առումով:

Անդրադառնալով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Անդրանիկ Լալայանի կողմից ներկայացված հայտարարությանը, **Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը համայնքներին ղեկավարներին առաջարկեց՝**

1.ընդունել ի գիտություն և ռազմաուսումնական հաստատություններ ընդունելության և կադրային սպայական ծառայության գրավչության ապահովման նպատակով համայնքներում կազմակերպել համապատասխան տարիքի քաղաքացիների իրազեկում սպայական կադրերի կենցաղային հիմնախնդիրների լուծման ուղղությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության նախաձեռնության մասին, ինչպես նաև հետագայում ռազմաուսումնական հաստատություններում դիմորդների քանակական աճի բարձրացման գործընթացին խթանելու նպատակով ապահովել համայնքների ազգաբնակչությանը հայտարարությամբ նշված իրավական ակտով սահմանված իրավակարգավորումների վերաբերյալ պատշաճ իրազեկումը:

Օրակարգային հարցերի և հայտարարությունների քննարկմամբ և ամփոփմամբ, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը խորհրդակցությունը հայտարարեց ավարտված:

Հայաստանի Հանրապետության

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 20.06.2022 10:34:08 GMT+4

Արմավիրի մարզպետ՝ Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

Էդվարդ Հովհաննիսյան

Արձանագրող՝
Դ. Դավթյան-
Քարտուղարության պետ